


79629.

# NAVASART

ORGANO DE LA U. G. ARMENIA DE CULTURA FISICA



2 0 1 3

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ Հ. Մ. Բ. Մ.-Ի

ՅՈՒՆՈՒՍ 1957

12001

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նամակ Հայագէտ Գիրտ Բանաստեղծին	ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	1
Հայերէն Լեզու	Մ. ՌԱՇԻՏ	3
Սամսոնի եւ Կիրասոնի մէջ հայ մարմնակրթական շարժում	Կ. ՇԱՀԻՆԵԱՆ	4
Հիւս. Ափրիկէի հայ գաղութը		7
Ոգիմպիական հաղեր		8
Սկաուտական հաղեր	Մ. ԵԱՆԸԳԵԱՆ	10
Համագգային Հայագիտական Միութեան Տեղեկագիրը		20
Յունաստանի Հ. Մ. Ը. Մ. Ի Շրջ. վարչութեան նոր կազմը		24
Un Nuevo Año	EDITORIAL	25
Armenia y sus Denominaciones	R. MIRAKIAN	26
Refutando al diario "Djumhuriet"	SPORTMEN	32
El Maestro Armenio	ARMEN.	35
Conozcamos a nuestros grandes antecesores - Raffi		36

Յովսէփ շարագեանի մահուան առթիւ փոխան ծաղիկեպսակի  
Հ. Մ. Ը. Մ. Ի կը նուիրեն --

Մարգարեան Եղբ. 1000.--, Իր եղբորորդիները 500.--, Աշար-  
նեան Եղբ. 500.--, Հայկ Էմիրեան 500.--, Միւրան Լեւոնեան 500.--,  
Յովհաննէս Ստեփանեան 500.--, Ա. Ֆերէնեան 500.--, Թիւֆէնֆանեան  
Եղբ. 500.-- Պերպլերեան Եղբ. 500.--, Պարսամեան Եղբ. 500.--, Վ.  
Արքիմեան 200.--, Եսքեր Կրկրեան 100.-- փերս:



ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



Հ.Մ.Ը.Մ.-Ի

Դ. ՏԱՐԻ, ԹԻԻ 44

ՅՈՒՆՈՒԱՐ 1957

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՄ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## ՆԱՄՐԿ ՀԼՅԱԳԷՏ ՔԻՒՐՏ ԲԱՆԸՍՏԵՂԾԻՆ

Մի րելի բանաստեղծ Միխայէլ Ռաչիտ,  
«Նաւատարդ»ի խմբագրութիւնը հաճոյքով ընդառաջ գնաց  
մեր ինդրանքին, արտատպելով ձեր մէկ ոտանաւորը, որ հիանա-  
լի ներփող մըն է մեր լեզուի մասին:

Անկասկած, օտտուած էք բանաստեղծական տաղանդով եւ  
կատարելապէս կը տիրապետէք արեւելահայ մեր բարբառին, որ  
արդի մեր պետական լեզուն է: Ինչպէս ձեզ ծանօթ է, մենք ու-  
նինք նաեւ արեւմտահայ բարբառը, որ նոյնքան ճոխ, ճկուն եւ  
բանաստեղծական է, եւ որով կը խօսինք մենք, արտասահման  
ծնած եւ մեծցած երիտասարդներս: Ձեզ ծանօթ է արդէն,  
որ այս երկու բարբառներուն մայրը մեր գրարար լեզուն է, որ  
այժմ չի գործածուիր:

Դատելով ձեր այս մէկ ոտանաւորէն, ուրախութեամբ կը  
վկայենք, որ դուք օտտուած էք բանաստեղծական տաղանդով:  
Գիտէք ձեր նիւթը սկսիլ, զարգացնել եւ տրամաբանական վախ-  
ճանին հասցնել, ինչ որ ապացոյց մըն է, թէ ձեր միտքն ու երե-  
ւակայութիւնը ներդաշնակ են, վայելուչ կարգապահութեամբ:

Ձեր լեզուն պարզ է, յստակ եւ սահուն, նման Հայաստանի եւ  
Քիւրտիստանի կարկաշիւն առուակներուն, իսկ ձեր սէրը կուսա-  
կան է, անկեղծ եւ թաթաւուն մեղմ թախեծով, սէր մը որով գի-  
տեն սիրել Հայաստանի եւ Քիւրտիստանի գեղուհիները:

Մէկ խօսքով, դուք քրտածին եւ հայագիր բանաստեղծ մըն  
էք, որ կուզաք միացնելու Քիւրտիստանը եւ Հայաստանը իրրեւ  
սիրոյ եւ երախտագիտութեան լրիւ ամբողջութիւն մը:

Եւ արդէն մեր աշխարհները ի՞նչ են որ, եթէ ոչ միացեալ եւ գեղեցիկ յեռնաշխարհ մը, ուր Հայ եւ Քիւրտ ժողովուրդները ապրած են անյիշելի ժամանակներէ ի վեր:

Հոս տիրութիւնը մեզ կը պատէ, երբ կը յիշենք մեր ժամանակաւոր բաժանուհները, տարրերութիւնները եւ արիւնալի անհաճութիւնները: Երբորդ ոյժ մը, արիւնարբու եւ վայրագ, կատարեալ Եէյթանը մը, որ ժողովրդական եւ թուրանական անապատներէն յանկարծ փրթաւ եկաւ մեր գեղեցիկ եւ միացեալ լեռնաշխարհը եւ մեզ բաժնեց ու տիրեց մեզ:

Ձեր նախնիքը, անգիր եւ անլի անգէտ, չկրցին լմբունել դաւալը, որ կը լարէր թուրանական Եէյթանը մեր արիւնակից ժողովուրդներուն դէմ: Մեր նախնիքը, հաւատարիմ իրենց նախորդներու պատմական առաքելութեան, զղայցին այդ ոյժին հրէշալի ծրագիրը, ու սկսեցին հայ-քրտական եզրայրութեան մէջ փնտրուել երկու ժողովուրդներու միակ փրկութիւնը: Այս ուղղութեամբ, թէեւ ուշ, բայց անլի քան կէս դար հայ-քրտական եզրայրութեան ի խնդիր, աննման առաքեալներ եւ քարոզիչներ զոհ տուած ենք: Բայց անօրուտ: Ու Եէյթանը իրականացուց իր դիւալի ծրագիրը: Նախ՝ մեզ եւ ապա ձեզ բնաջնջեց:

Հոս կ'իջեցնենք պատմութեան սեւ վարագոյրը, անցեալի մասին չխօսելու համար:

Հիմա ուրախ ենք, որ իրականացած է Հայ եւ Քուրտ եղբայրութիւնը, մեր իսկ արիւնով եւ մեր երկու ժողովուրդներու անթիւ եւ անմեղ նահատակներով:

Անհունապէս ուրախ ենք նաեւ, որ մեր փոքրիկ մարդասէր հայրենիքը, հետեւողութեամբ մեր Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի, ձեզ այր եւ բէն ստեղծած եւ քերականութիւն կազմած է, որպէսզի քրդերէն յեզուով գրել կարգալ սորվիք, դառնայով հասուն եւ քաղաքակիրթ ազգ մը: Սիրելի բանաստեղծ, արդէն ձեզ ծանօթ պէտք է ըլլայ, որ հայ ազգը, Ասիոյ մէջ, եղած է քաղաքակիրթութեան եւ մշակոյթի ախտյեաններէն մէկը, ու այդպէսին ալ կը մնայ, հակառակ մեր քաղաքական աննպաստ պայմաններուն: Եւ ան ուսման ու դիտութեան հաւատարիմ դասակար պետ ըլլալ նաեւ քրտութեան համար, ազգ մը, որ մեզ պէս գտարիւն է, ուշիմ եւ ընդունակ լուսաւորութեան եւ յառաջդիմութեան:

Մենք ունեցած ենք բանաստեղծ-մարգարէներ, որոնք գուշակած են մեր լուսապայծառ ապագան, ինչպէս նաեւ մեր մշակութային եւ քաղաքակիրթական աննախընթաց վերելքը:

Այսօր մեր փոքրիկ Հայաստանը գիտութեան, գրականութեան եւ արուեստներու աշխարհ մըն է, ուր բախտն ունէք ապրելու եւ ստեղծագործելու, ձեր իմացական ճիշդ ու վաստակը խառնելով ընդհանրական ստեղծագործութեան:

Մենք, ինչպէս նաեւ մեր հայրերը, դժբախտաբար չունեցանք ձեր քախաւսըութիւնը, որովհետեւ մեր գողտրիկ հայրենիքը

դեռ ամբողջացած չէ եւ անոր կառուցումը տակաւին կը շարունակուի:

Ու մեր կամքէն անկախ դեռ հեռու կը մնանք մեր նորակիրտ հայրենիքէն:

Սակայն, պատմութիւնը շա՛տ խաղեր եւ քմահաճոյքներ ունի, ու Չարին յաղթանակը յաւիտենական չէ:

Ու պիտի գայ «մի օր ժամանակ», ինչպէս ըսած է մեր գրող - մարգարէն, Մասիսի ճակատին պիտի փողփողի մեր դրօշակը, որ պիտի ըլլայ նաեւ Քիւրտիստանի ազատութեան եւ անկախութեան ազդանշանը:

Այն ժամանակ խաւարը պիտի փարատի, Չարը պիտի խորտակուի եւ Արարատից ծագող արեւի ճառագայթները պիտի լուսաւորեն Հայաքրտաստանի գեղեցիկ լեռնաշխարհը:

Եւ այն ժամանակ Հարսանիք պիտի ըլլայ նաեւ մեր միացեալ աշխարհին մէջ:

Կարօտներով եւ երազներով՝ «Նաւասարդեան Սերունդ»:

### ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶԻՈՎ

Անքուն գիշերում, կարօտ սիրածիս՝  
Անցնում եմ մենակ ծառուղիներով.  
Եւ մի երգ անուշ դողդոջ շուրթերիս՝  
Թրթրում է վեհ հայերէն լեզուով:

Թէպէտ օրօջքիս մայրըս սիրասուն՝  
Օրօր չի ասել հայերէն լեզուով,  
Բայց երբ քայլեցի քայլքով երերուն՝  
Ինձ կանչում էին հայերէն լեզուով:

Իմ յուշ մանկութեան անուշ օրերին՝  
Ընկերներիս հետ կապւեցի օրրով.  
Միշտ վազում էինք, խաղում միասին,  
Ու իրար կանչում հայերէն լեզուով:

Դպրոցի ճամբին ամէն օր յուզած՝  
Տարւում էի ես օրւայ դասերով.  
Հէքեաթներ, երգեր, անգիր սովորած՝  
Մրմնջում էի հայերէն լեզուով:

Թէպէտ ուրիշ է մայրենի լեզուս՝  
Նրման լեռնային ժայռին հրկիզուն,  
Բայց հարազատ է քրդական հոգուս՝  
Արեւանըման բոբր հայոց լեզուն:

Միխայիլ Ռաչիս

(Քիւրտ Բանաստեղծ)

## ՄԱՄՍՈՆԻ ԵՒ ԿԻՐԱՍՈՆԻ Մէջ ՀԱՅ ՄԱՐԴԱՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՐՈՒՄ

Սամսոնի եւ Կիրասոնի մէջ, եւրոպական մեթոտով, մարզական շարժման հիմնադիրը եղած է մեր ականաւոր մտաւորականներէն Վահան Մինախորեանը, 1913-1914 թուին:

Իբրև Սամսոնի ազգային վարժարանի մարմնամարզի ուսուցիչ, Մինախորեանը իր մասնագիտութիւնը եղող շուէտական մարմնամարզին ուժ կուտայ իր բոլոր մանրամասն: Թեամբ տողանցք, ութմիջ մարզանքներ եւ շուէտական մարզանքի զանազան ձեւեր, ինչպէս նաեւ զանազան խաղեր:

1914 Յունիս 22-ին կը պատրաստէ վարժարանի տարեվերջի մարզահանդէսը: Ազգային վարժարանի մարզիկներու նուագախումբը մուտք կը դործէ մարզադաշտը, Հնչեցնելով Հայկական եւ Բրբական քայլերգները, Հիանալի արամադրութիւն ստեղծելով:

Վ Մինախորեանի իսկ ղեկավարութեամբ տեղի կ'ունենայ շուէտական մարզանք, պարկարջաւ, շուան քաշել, ինչպէս եւ խրախճանք, Հրավառութիւն: Հրափամփուշաները վար կը թափին գոյնզգոյն աստղեր ձեւացնելով: Մարզահանդէսի կարգադրիչ յանձնախումբը պատրաստած է ճոխ պիւֆէ եւ վիճակախաղի սեղան: Հանդէսը կը հովանաւորէ Առաջնորդը, ներկայ է նաեւ միութեան արք Նէճմի պէյը:

Սամսոնի 1914-ի սոյն Հայկական առաջին մարզահանդէսը Հայ դադութիւն մեծ ոգեւորութիւն եւ խանդավառութիւն կը ստեղծէ: Իսկ թուրք ամբոխը նախանձով կը լցուի, մանաւանդ երբ Հայ մարզիկները կարգապահ եւ ութմիջ տողանցով ծք, քաղաքին մէջէն կ'անցնին իրենց առաջ ունենալով նուագախումբը, որ կը հնչեցնէր զանազան քայլերգներ:

Վահան Մինախորեան քաջալերուած սոյն աննախընթաց մարզահանդէսէն, Զատիկական սունբրու առթիւ, կը մեկնի Կիրասոն, հոն ալ տանելով եր-



1914-ի Սամսոնի Ազգային վարժարանի մարզիկներու նուագախումբը:

կու վարժ Թմբկահարներ: Այդ շրջանին Կիրասոնի Աղբ. վարժարանի տնօրէնըն էր Սարգիս Բարսեղեան, որ Մինախորհանի շատ օգտակար կ'ըլլայ՝ մարզահանդէսի պատրաստութեան մէջ, ի նպաստ Աղբ. վարժարանի: Թաղական Խորհուրդէն սկսեալ, բոլոր հայերը, մանաւանդ տնօրէնին տիկինը, դրադէտ Պերճուհի Բարսեղեանը, մեծ աշխատանք տարած էին, մարզահանդէսը փայլուն ընելու համար:

Կիրասոնի Աղբ. վարժարանի մարզահանդէսն ալ Սամսոնի պէս մեծ յաջողութիւն կ'ունենայ: Հոս ալ հայ զաղութիւն մէջ կը ստեղծուի խանդավառութիւն մը, որուն հետեանքը կ'ըլլայ աւելի ուժ տալ Աղբ. վարժարանին, քաջալերելով նոր սերունդը՝ անոր տալով մտային եւ Ֆիզիքական կրթութիւն:

1914-ի Կիրասոնի Աղբ. վարժարանի մարզահանդէսին առթիւ, անպատեհ չեմ նկատեր դէպք մը պատմելու, ցոյց տալու համար որ, մեր անցեալի ուսուցիչները եւ կամ գործիչները ազգին եւ մանաւանդ նոր սերունդին ծառայելու համար ի՞նչ մեծ զոհողութիւններ յանձն առած են: Նոյնիսկ տարբական ապրուստի միջոցներէն զրկելով ինքզինքնին եւ իրենց ընտանիքը:

Կիրասոնի մարզահանդէսի նախօրեակին, մարդիչ Վահան Մինախորեանը կը հրախորհի վարժարանի տնօրէն Սարգիս Բարսեղեանի տունը ճաշել, առանց որ Տիկ. Պերճուհի Բարսեղեանը լուր ունենալու: Ի հարկէ Տիկինը նեղ դրութեան կը մատնուի, քանի որ ուտելու ոչ մէկ բան կ'ունենան տան մէջ, ոչ իսկ դրամ կ'ունենան պարէն դնելու: Ծարհաճառ կ'որոշին թալակահանք մը առ հասցիւ իրենց ամսականին քանի մը դուրուչ գանձել՝ օրուայ հիւրը պատուելու համար: Բայց ատով հարցը չի վերջանար, Սարգիս Բարսեղեան երբ կը մեկնի շուկայ գնումի համար, Տիկ. Պերճուհի կը գտնուի վ. Մինախորեանին իր ամուսնուն յափազանց անհողութեան եւ անձնագնահատութեանը համար, ու կ'ըսէ՝ Աղբ. վարժարանի տնօրէն պիտի ըլլայ եւ կանոնաւոր հաղուստ մը չունի հազնելու համար, ի՞նչպէս պիտի ներկայանայ վաղուան զարոցական մարզահանդէսին, տարատը կարկտելէն տեղ չէ մնացած կարկտելու, կը վայելէ՞ տնօրէնի մը այս վիճակով ներկայանալ հասարակութեան:

Ծառի ժամանակ տնօրէն Սարգիս Բարսեղեան կը նկատէ, որ վ. Մինախորեան իր վրայ յառած աչքերը. ու բանէ մը տեղեակ չըլլալով, նեղացած Մինախորեանի կ'ուղէ խօսքը.— Ինչո՞ւ այսպէս վայրենիի պէս վրաս կը նայիս, Գարակիօզ եմ, ի՞նչ եմ ։

Գարակիօզ չեա, բայց անոր պէս բան մը, դիտե՛ս Սարգիս, կ'ըսէ Մինախորեան, այս հազուատուիք վաղուան հանդէսին չես կրնար ներկայ ըլլալ:

— Առ քեզի օյին, կը պատասխանէ Սարգիս, ի՞նչ ունի հազուստս որ, ու ակնարկով կը քննէ ինքզինքը:

Իրականին մէջ, ոչ միայն կարկտնուած էին հազուստները. այլ՝ բաճկոնը եւ տարատը ուրիշ կողմերէ շինուած էին: Մեր աննժամ Սարգիսը ստիպուած դուրս կ'ելլէ, իրեն համար նոր հազուստ ճարելու համար

Իսկ ամենէն զուարճալի եւ ճակատազրակար կը պատուի մարզահանդէսէն վերջ, հրախաղութեան ժամանակ: Հրափամփուշտներէն մէկը իր ուղղութիւնը յանկարծ կը կորսնցնէ եւ ժողովուրդին վրայ կ'իյնայ: Մարդիչ վ. Մինահորեանը անմիջապէս դէպքին վայրը կը վազէ, վտանք մը կանխելու համար: Բայց ի՞նչ տեսնայ, Տէր Աստուած, հրափամփուշտը ինկած էր տնօրէն Սարգիս Բարսեղեանին վրայ եւ նոր գնած տարատը այրած եւ մեր խեղճ Սարգիսը նորէն իր կարկտաններով լեցուն հին տարատին արժանի եղած էր:

Այս ալ ի միջի այլոց նմոյշ մը, մեր անցեալի կրթական շահներու ազգասիրութեան եւ անձնագնահատութեան մասին:

նաւորելով թրջահայաստանի ամենէն յետամնաց դաւաճներուն մէջ, զոհաբերելով ամէն ինչ, եւ շատանալով ոչինչ, հակառակ իրենց ունեցած համալսարանական կրթութեան:

Վ. ՄԻՆԱՅՈՐԵԱՆ ԵՒ ՍԱՄՍՈՐՆԻ ՄԻԻԹԷՍԱՐԻՖ (կառավարիչ) ՆէճՄԻ ՊէՅ

Վ. Մինախորեանի սարքած առ յի շքեղ մարդահանդէսները ո՛չ միայն թուրք ժողովուրդին նախանձը շարժած էին, այլ եւ թուրք պետական մարդոց: Օր մը Վ. Մինախորեանը կը հրաւիրուի Միւթեսարիֆ Նէճմէ պոյի մօտ, ուր անոնց մէջ տեղի կ'ունենայ հետեւեալ խօսակցութիւնը:

— Վահան էֆէնտի կ'ընէ կառավարիչը, ահա՛ անվարձ, մերոնք դժբախտաբար չարից աւելի դանդաղաշարժ են: Յանկալի է, որ մեր մանչերն ալ ձերիններուն պէս առաջ շարժուին, հին ուժիմի ժառանգութիւնը դեռ ճնշում է մեզ, եւ աւելորդ է ասել թէ՛ շատ անմխիթար է մեր դպրոցները վիճակը:

Նէճմի պէյ կ'աւելցնէ.

Վահան էֆէնտի, ի՞նչ է ձեր կարծիքը այս մասին, ի՞նչպէս կարող էք միտմամանակ, թէ՛ ձեր եւ թէ՛ մեր վարժարաններու կրկնակի աշխատանքները կատարելու:

Վահան Մինախորեան կը պատասխանէ — Վարձ ժամանակուայ մէջ, ամենից շատը, երկու ամսուայ մէջ, ես կարող եմ թուրք ուսուցիչներէց մարդիկներ պատրաստել, այնուհետեւ իմ կարծիքը չի զզացուի՝:

Վահան Մինախորեան այս կերպով թուրք վարժարաններուն մարմնամարդի դասաւանդութիւններ կը սկսի տալ: Տարւոյն վերջը Միւթեսարիֆը մարդահանդէս մը կը հովանաւորէ, ղեկավարութեամբ Վ. Մինախորեանի, մասնակցութեամբ հայ, թուրք եւ յոյն վարժարաններու աշակերտութեան, ի նպատակով թուրք դպրոցներու, եւ ներկայ է Սամսոնի թուրք, հայ եւ յոյն բնակչութիւնը: Յոյները արկիթական մրցումներ կը կատարեն, իսկ հայերը, հայկական նուագախումբի ղեկավարութեամբ, նախ ղեղեցիկ սողանցք մը կ'ընեն բարձրաստիճան կառավարական եւ ղինուորական հիւրերու առջև, որոնք կը պատասխանեն բուն ծափահարութեամբ: Ապա կը սկսի շուէտական ութմիթ մարզանքները, մեծ յավոդութեամբ, որ կը տեւէ մէկ ժամ: Հայ մարդիկները այս առթիւ, շնորհաւորութիւններ կը ստանան Միւթեսարիֆէն եւ թուրք բարձրաստիճան իշխանաւորներէն:

Եզրակացնելով՝ կ'ուզենք ցոյց տալ թէ՛

Ա.— Մեր անցեակի կրթական մշակները եւ կամ դործիչները ի՞նչ դժուար պայմաններու մէջ, նիւթական կամ բարոյական, Ազգ կը կերտէին, պաշտօն-





Բ.— Յոց տալ եւ փաստերով ու վկայութիւններով հաստատել, որ, հա- կառակ ներկայիս Թուրք թերթերու ուրացումին, մենք եղած ենք իրենց մարմնամարզի ուսուցիչները, ո՛չ միայն Սամսոնի, Կիրասոնի եւ Պոլսոյ, այլ նաեւ Իզմիրի մէջ: Իզմիրի թուրք վարժարաններու Սուլթանիէ, Խոտտիէ եւ Եարֆ վարժարաններու մարմնամարզի ուսուցիչը եղած է, 1910-էն սկսեալ, փրոֆ. Պետրոս Մելիքեանը:

Իսկ ի՞նչպէս վարձատրած են թուրքերը իրենց մարմնակրթութեան հիմն զնոց Հայ մարզիչները, թող ընթերցող դատէ:

1915-ի Հայոց տարագրութեան շրջանին մարզիչ Վահան Մինախորեանի անցուցած ողբիսիականը եւ կրած շարչարանքները վկայ են թուրք ապե- րախտութեան:

Ք. Այրես

ԿԱՐՕ ԵԱՀԻՆՅԱՆ

ՀԻՒՍ. ԱՓՐԻԿԷԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

ՄԱՌՌԲ.— Մարտաբան զաղութը սկիզբ առած է 1920 թուականին: Այ- սօր կը ներկայացնէ շուրջ 80 ընտանիք, ծոտաւորացէս 400 հոգի, որոնք կը զբաղին գլխաւորաբար վաճառականութեամբ եւ արհեստներով: Լաւ եւ սի- բալիք յարաբերութիւններ ունին տեղացիներուն հետ:

Այսպէս՝ Հայեր կան Ռապաթ մայրաքաղաքին մէջ, 15 ընտանիք: Իսկ զաղութին կեդրոնն է Քազապլանֆա: Վերջերս զումարուեցաւ համայնքի ասրեկան Ընդհանուր Ժողովը, տեղւոյն Յունաց սրահին մէջ, ասեկապետու- Թեամբ փիրայր Արիկեանի: Վարչութեան նիւթական գործունէութեան մա- սին Պր. Պերճ Վարժապետեանի գոհացուցիչ զեկուցումէն վերջ, Ժողովը վեր- ընտրեց նախորդ վարչութիւնը: Նորընտիր վարչութեան անդամներն Պն՝ Գուրգէն Պալիպեան, Վահան Համբարձումեան, Պերճ Վարժապետեան, Եր- ուանդ Գարապիլիքեան, Իսկ Ռապաթէն՝ Հրայր Սրապեան: Գաղութին վա- ղեմի եւ սիրուած անդամներէն Պերկամարեան Զարեհ, որ ի կենդանութեան իր ամբողջ հարստութիւնը կտակած է Հայ Բարեգործական Ընդհ. Միութեան:

Հայեր կան նաեւ Մազախան՝ 7 ընտանիք, Մարաֆէշ՝ 6 ընտանիք, Մեզ- օնտ՝ 6 ընտանիք, Սաֆի՝ 4 ընտանիք եւ Մոկաաոպ՝ 2 ընտանիք:

ԱԼՃՆՐԻԱ.— Ալճերիական զաղութն ալ նոր է. Հայեր սկսած են հոս հաս- տատուիլ 1910-էն ետք: Այսօր կը ներկայացնեն շուրջ 110 ընտանիք, ծոտա- ւորացէս 500 հոգի: Բոլորը բարեկեցիկ են, մեծ մասամբ առեւտրական: Այսպէս՝ մայրաքաղաք Ալսէրի մէջ կան 10 ընտանիք, որոնցմէ հինգ հոգի ոսկերիչ: Գոնաթաթիսի՝ 8 ընտանիք, առեւտրական: Ֆիլիսիպիլի՝ 5 ընտանիք, Պոնի՝ 8 ընտանիք, Սեթիֆ՝ 8 ընտանիք, Աֆրապիլի՝ 5 ընտանիք, Սիտիպիլ-Ա- պես՝ 4 ընտանիք, Սուգիբաս՝ 8 ընտանիք:

ԹՈՒՆՈՒՅ.— Թունուղական զաղութն ալ 1920 թուականէն վերջ կազմը- ւած է: Հայերը հաստատուած են առաւելագոյն Թունուղ մայրաքաղաքը, ուր կը զբաղին վաճառականութեամբ եւ արհեստներով: Ներկայիս Հայ զաղութը կը ներկայացնէ 25 ընտանիք՝ շուրջ 80 հոգի:

Դժբախտաբար ազգային որեւէ կազմակերպութիւն չկայ ո՛չ Ալճերիոյ եւ ոչ ալ Թունուղի մէջ:

1939-էն առաջ, այս երեք շրջանները կապուած էին Մարաֆէշի Ազգային Իշխանութեան: Տարին երկու անգամ հոն կ'այցելէր շրջուն քահանայ մը՝ Տ. Մեարոպ քհնյ. Աւետեան:

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Տասնչհինգ դարեր անցան այն ժամանակէն, երբ մոլեռանդ քրիստոնեան՝ Մեծ Թէոդոս կայսրը, կործանեց Ողիմպոսի սրբութիւնները (395 Ք. Վ.) : Բայց Ողիմպիական Խաղերու յիշատակը միշտ վառ մնաց անոր համակիրներուն սրտին մէջ :

19-րդ դարուն մարմնակրթանքը, շնորհիւ քանի մը խենդերու, օրուան նորոյթը դարձաւ : Սպանիացի գնդապետ մը, դերմանացի եւ շուէտացի երկու սպաներ, անգլիացի կղերական մը՝ դարձան մարզանքի ուսնչիւրաները : Մարմնակրթանքը սկսաւ զարգանալ եւ բացուեցան մարզական ակումբները : Ճիշտ այդ շրջանին էր, որ Փրանսացի մը կ'երազէր ողիմպիական խաղերու վերածնունդը : Ազնուական մըն էր ան եւ մոլեռանդ մը՝ պատմութեան ու մանկավարժութեան :

Ողիմպիական խաղերը 15 դար ետք վերածնած էին շնորհիւ Պառոն Փիէտառ Գուպէրթէնի :

1852-ին, Յունաստանի մէջ սկսան հետաքրքրուիլ այս հարցով, բայց միայն շատասուն տարի վերջն էր որ կը յաջողէր զբաղանանցնել ողիմպիական փառաշուք այդ խաղերու արդիական կեանքի պայմաններով :

1896-ին, Յունաստան 15 դար վերջ դարձեալ խաղերու Թատը հանդիսացաւ :

Սքանչելի վերածնունդին գլխաւոր դէպքն էր Մարաթոնի վազըը : Մըրցորդները Մարաթոնի վայրէն մեկնելով մինչեւ Աթէնք վազեցին, կտրեցին այն ճամբան, զոր Քրիստոսէ մօտ հինգ հարիւր տարի առաջ կտրած է աթենացի զինուորը : Հակառակ Պարսիկներու դէմ մղուած ճակատամարտէն յոգնած ըլլալուն, ան վազելով կտրած էր 42 քիլոմետր, որպէսզի Աթէնքի ժողովուրդին իմացնէ իրենիներուն յաղթանակը : Եւ ապա, յոգնութենէն գետնին ինկած էր՝ անշունչ :

1896-ի խորհրդանշական մարաթոնեան վազքի մրցորդները ընդհանրապէս յոյն քաղաքացիներ էին, որոնք աչք առած էին ճամբու բոլոր դժուարութիւնները :

Անոնք ճամբու ընթացքին հարիւր հազարաւոր հանդիսականներու կողմէ քաջաներուեցան : Այս պատմական մրցումը վերջ գտաւ յոյն հովիւի մը՝ Սիէրիտիու Լուիդի յաղթանակով :

Փիէտառ Գուպէրթէն այս ձեւով կը ներկայացնէ հովիւի յաղթանակը.— «Անոր յաղթանակը սքանչելի էր, ըլլայ ուժի կամ պարզութեան տեսակէտով : Մարզադաշտ մուտքին, ուր հաւաքուած էին մօտ եօթանասուն հազար հանդիսականներ, ան ներկայացաւ առանց յոգնութեան նշանի եւ երբ կոստանդին եւ Գէորգ իշխանները գեղեցիկ ճեմքով մը զայն իրենց թեւերուն մէջ առած՝ տարին Թաղաւորին մօտ, ան կարծեց թէ հելլենական ամբողջ հին պատմութիւնը կը վերածնէր : Որոնաբնդոստ ծափահարութիւնները երկար տեսցին :

Այդ թուականէն սկսեալ չորս տարին անգամ մը խաղերը շրջեցան աշխարհի մեծագոյն դաշտերը : Ահաւասիկ արդի ողիմպիական խաղերու տօնակատարած վայրերն ու թուականները.—

Ա. Ողիմպիական 1896, Աթէնքի մէջ :

- Բ. Ողիմպիական 1900, Փարիզի մէջ:
- Գ. Ողիմպիական 1904, Սէնթ Լուիզի մէջ:
- Դ. Ողիմպիական 1908, Լոնտոնի մէջ:
- Ս. Ողիմպիական 1912, Սթոքհոլմի մէջ:

Ձ. Ողիմպիականը 1916-ին, Ա. Համաշխարհային պատերազմի պատճառաւ տեղի չունեցաւ:

- Է. Ողիմպիական 1920, Անվերսի մէջ:
- Ը. Ողիմպիական 1924, Փարիզի մէջ:
- Թ. Ողիմպիական 1928, Ամսթերտամի մէջ:
- Ժ. Ողիմպիական 1932, Լոս Անճելոսի մէջ:
- ԺԱ. Ողիմպիական 1936, Պերլինի մէջ:

ԺԲ. եւ ԺԳ. Ողիմպիականները 1940 եւ 1944-ին Բ. Համաշխարհային պատերազմի պատճառաւ տեղի չունեցան:

- ԺԴ. Ողիմպիական 1948, Լոնտոնի մէջ:
- ԺԵ. Ողիմպիական 1952, Հելսինքիի մէջ:

Իսկ ԺԶ. Ողիմպիականը բացուեցաւ Մելպուրնի մէջ (Աւստրալիա), Նոյեմբեր 22-ին եւ տեւե՛ց մինչեւ Դեկտ. 2:

Կը մասնակցէին մարդիկներ աշխարհի բոլոր մասերէն: Հայաստանէն ալ՝ Տէր Յովհաննէսեան, Յովսէփեան, Ենդիբարեան եւ Ազարեան:

Մարզաբանք սանձամբն է եւ արդիականը ուր կրնան տեղաւորուիլ հարիւր տասը հազար հանդիսականներ:

ՄՈՍԿՈՒԱՅԻ Հայկական Արուեստի եւ Գրականութեան Տասնամեակին մասնակցած արուեստագէտները, մասնաւոր կտախումբերով եւ օդանակերով վերադարձած են Երեւան: Հանգր հոգիէ աւելի հայ արուեստագէտներու յաղթական բանակը մեծ ցնուութեամբ ընդունուած են մայրաքաղաքի մէջ:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ Միութեան Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը, Մոսկուայի Հայկական Տասօրեակին առթիւ, Աշխարհի գրօշի շքանշան տուած է Վ. Մուշոպեան: Հայկական պետական տրամաթիկ թատրոնին: Նոյնպէս Հայկական Արուեստի մէջ աշխատողներու ժողովրդական արուեստագէտի պատուաւոր կոչում շնորհած է՝ Գոհար Գասպարեանի (օփերայի եւ պարախաղի երգչուհի), Միքայէլ Թաւրիզեանի (պարախաղի եւ թատրոնի դիտաւոր ղեկավար), Հրայիայ Ներսէսեանի (տրամաթիկ թատրոնի դերասան), Վահրամ Փափաղեանի (տրամաթիկ թատրոնի դերասան), Տաթևիկ Սազանդարեանի (օփերայի եւ պարախաղի արուեստագիտուհի-երգչուհի):

Լենինի շքանշան ստացած են 11 անձեր – դերասան, բեմադրիչ, նկարիչ, գրող եւ երգիչ: Աշխատանքի շքանշան տրուած են 50 անձերու:

# ՈՎԱՌԻՏԱԿԱՆ ԽԱՊԵՐ

## 22.- ԱԶԳԸ ԲԱՑ ՍԳԱՌԻՏԸ.-

Այս խաղը կը խաղացուի մէկ կամ աւելի խմբակներով եւ նպասակն է ուշադիր եւ աչքք բաց սկսուածներ երեւան բերել:

Յմբասպետը ձեռքը ունի մասնակցող սկսուածներու անունները, ցուցակի մը վրայ շարուած: Հոն նշանակուած են նաեւ տասնեակի մը դանազան մանրամասնութիւններ եւ առարկաներ, որոնք կը ծանօթացուին սկսուածներուն, առ ի տեղեկութիւն: Իւրաքանչիւր սկսուած, աչքը չորս բացած, իր դնացքի պահուն ուշադիր կը դիտէ եւ ամիջապէս որ ցուցակին մէջ յիշուած ունէ մանրամասնութեան եւ կամ առարկայի հանդիպի, պարտի վազել խմբասպետին եւ իմացնել նոյնը: Յմբասպետը, փոխադարձաբար, լրատու սկսուածին անուան գիմաց պիտի նշանակէ նիշեր:

Իւրաքանչիւր լուցիկի դանելուն մէկ նիշ, իւրաքանչիւր կոճակի դանելուն մէկ նիշ, թուշուի ոտքի հետքեր երկու նիշ, օտար անձի մը կոչիկին կամ գգեսաին վրայ տեսնուած կարկասան երկու նիշ, մոխրագոյն ձի տեսնելուն երկու նիշ, առարկայի թուշուան երկու նիշ, Շնճողակի նստելուն մէկ նիշ, թթենիի ծառի երկու նիշ, կտորած թէյ ամանի երկու նիշ եւ ապակիի մէկ նիշ:

Վերս նշանակուածները, իբր օրինակ կը ծառայեն: Յմբասպետը երեսայ դանազան առարկաներ որոշել սկսուածներուն ուշադրութիւնը արթնցնելու եւ վարժեցնելու դասնոք, դիտելու հետուն եւ ծօղը, վերը եւ վարը:

## 23.- ԳՏԻՐ ԼԻԻՍԻՍԸ.-

Սկսուածները իրարմէ երեսունեական քայլ հեռու կը կայնին, իւրաքանչիւրը իր սկսուածական ցուպը դետին կը դնէ աջնպիտի ձեւով մը, որ հիւսիս-ար ցայ տայ: Յետոյ կը բերք քայլ կը հեռանայ իր դանազանէն: Յմբասպետը կամ իրաւարարը կը լուցադատէ բոյր գողմնացողները եւ կողմնացոյցի միջոցաւ կը վճռէ թէ՛ որ սկսուածը լուացոյն կերպով կուհած էր հիւսիսի դիրքը:

Ասիկա բնտիր խաղ մըն է գիշերուան եւ ամպոտ օրերու յատուկ, կընայ խաղացուիլ նաեւ պայծառ օդին:

## 24.- ՁԻԻՆԷ ԲՆՈՐ.-

Յմբակներէն մին ձիւնէ բերդ մը կը շինէ, անոր կուռայ դանազան յարմարութիւններ ճշգրիտ բերդի մը. անոր մէջ կը յինէ ծածուկ ճամբաներ, խրամներ, դիտելու ծակեր եւայլն: Երբ բերդին շինութիւնը աւարտի, թողնամի խմբակները պիտի յարձակին եւ ոմբակոծեն զայն՝ ձիւնէ գնդակներով: Որ սկսուածը որ, ձիւնէ գնդակով մը կը զարնուի, մեռած կը նկատուի եւ կը պարի խաղին մասնակցել: Յարձակող կողմը, սովորաբար, պէտք է կրկնապատիկ աւելի ըլլայ քան պաշտպանողները:

## 25.- ԴՐՕՇԻ ԳՐԱԻՈՒՄ.-

Իւրաքանչիւր կողմ՝ մէկ կամ աւելի խմբակներ:  
Երկու կողմերն ալ սահմաններ պիտի ունենան որոշուլ դետին մէկ մասը եւ պիտի պաշտպանեն երեք դրօշներ (կամ երեք լապտերներ՝ գիշեր ժամանակ՝ դետին փրկու, սաք բարձր անդ մը դրուած), որոնք անգնատրուած

են երկու Հարիւր քայլ Հեռու (դիշերր Հարիւր քայլ) : Պաշտպանող առաջապահ խմբակը կրնայ ամբողջովին պահուարտի և կամ գոյգ գոյգ տարածուի : Յետոյ, Հետագօտիչներ պիտի ուղարկէ թշնամիին դիրքերը ճշգիւլու : Երբ անոնք հակառակորդին դիրքերը մէջտեղ կը հանեն, պիտի ջանան աննշմար սահիլ դրօշներու քով և զանոնք խելով բերել իրենց կեդրոնը : Ամէն սկառու կարող է մէկ դրօշ միայն գրաւել :

Եթէ ոեւէ սկառու յիսուն քայլ Հեռաւորութենէ մը Հանդիպի աւելի ցօրաւոր սկառու ջոկատի մը, դերի ինկած կը նկատուի : Իսկ եթէ անիկա կարողանայ առանց տեսնուելու սողսկելով Հեռանայ, ընդունելի է :

Դիրքի մէջ գտնուող առաջապահ սկառուները շեն կրնար Հեռանալ իրենց դիրքերէն, բայց անոնց ոյժը կրկնակ կը Համարուի և կրնան առանձին լրատուներ ուղարկել իրենց գրացիներուն և կամ իրենց պատկանող Հետագօտիչ բաժնին :

Ամէն լատարպահ և Հետագօտիչ խմբակներու քով պէտք է նշանակուին մէյմէկ իրաւարարներ :

Որոշեալ ժամու մը րոտր գործողութիւնները պիտի դադրին և ամէնք պէտք է Հաւաքուին՝ կեդրոնին տայու իրենց Համարատուութիւնը : Հետեւեալ նիշերը կրնան ծառայել լաւագոյն կողմը յայտնի ընելու :—

Իւրաքանչիւր դրօշի կամ լապտերի գրաւումի և յանձնումի Համար Հինգ նիշ, իւրաքանչիւր Համարատուութիւն կամ ուրուագիծ թշնամիին դիրքերու մասին Հինգ նիշ, իւրաքանչիւր Համարատուութիւն թշնամիին Հետագօտիչ խումբի շարժումներուն երկու նիշ : Առաւելագոյն նիշ ստացող կողմը առաջին կը հռչակուի :

26.— Մ Ա Ք Ս Ա Ա Ո Յ Ջ Ն Ե Ր Ը.—

«Աստմանագիծ» ուէլ դիմ մրն է սորս Հարիւր քայլ երկար դատարանութեան մը մրայ, նախընտրելի է ճամբայ մը և կամ աւազուտ վայր մը նշանակել, ուր ոտքի Հետքերը դիւրաւ տեսանելի կ'ըլլան :

Խմբակներէն մին՝ ճամբու երկայնքը կը պաշտպանէ պահակներով, ուրիշներ ալ աւելի ներսերը պիտի բռնեն սահմանագիծին և ճաղաքօին մէջտեղի գետինը (ճաղաքօ կրնայ նկատուի ծառ մը, շէնք մը, եւայլն), որ կէս մղոն Հեռու պիտի բլայ սահմանագիծէն :

Մաքսախոյզներու խմբակ մը կը կեդրոնանայ նոյն սահմանագիծին միւս եզերքին վրայ, գրեթէ կէս մղոն Հեռաւորութեան մը մրայ և կը ջանայ սահմանը պաշտպանող սկառուները ճեղքելով անցնել առանձին կամ խմբովին, վազելով կամ քայլելով : Բայց անոնց մէջէն միայն մէկը մաքսախոյզ է և ան ալ իր կօշիկներուն ներքեւ կը կրէ Հետք ձգող մասնաւոր պայտեր, այնպէս որ հսկող սկառուները իրենց ուշադրութիւնը պիտի կեդրոնացնեն գտնելու Հետք ձգող պայտերու նշանները : Երբ պահակներէն մին կը նշմարէ այդ Հետքերը, անմիջապէս «ստանդախ» նշանը կուտայ ձեռքի շարժումներով, սուլելով, դրօշախօսութեամբ և կամ փողով և ամբողջ խումբը հաւաքուելով կը Հետապնդէ մաքսանենգը՝ նախ քան անոր ճաղաքէ Հասնելու : Եթէ մաքսանենգը յանդի պաշտպանող սկառուներու ճիրաններէն ազատի և առանց դերի իյնալու սրողուած կեդրոնը Հասնելու անիկայ խաղը շահած կը Համարուի :

27.- ԹՇՆԱՄԻՆ ԴՐՕՇԸ

Այս խաղը պէտք է խաղացուի, որքան հնարաւոր է, խորտուրորա եւ դժուարացանկի դաշտի վրայ; ուր կարելի է ոտզմաւարութեան եւ հետեւողութեան առիթներ գործածութեան դնել:

Սկառուները երկու անջատ բանակներու կը բաժնուին, իւրաքանչիւրը իր պետով, եւ դրօշով, որ ճողի մը կամ սկառուական դաւազանի մը վրայ բարձրացուցուած է. մէկ կողմի սկառուները պէտք է զանազանութիւն միւսներէն՝ իրենց բազուկին վրայ կապելով թաշկինակ մը՝ որ չափազանց յատակ երեւի թէ՛ իր խումբին անդամներուն ե թէ թշնամի սկառուներուն աչքին:

Իւրաքանչիւր բանակ իրեն պատկանող Հողն ունի, որուն մէջ նոյն բանակին անդամները ազատ են շարժելու. իսկ թշնամի ունէ մէկը կրնայ մտնել Հոն վտանգի ներքեւ:

Երկու բանակներու Հաւատար հետեւորութեան մը վրայ նշանակուած կէտը կեդրոն կը համարուի, խաղը կը սկսի՝ այդ կէտին վրայ կեդրոնացնելով թշնամի բանակներու բոլոր սկառուները եւ իւրաքանչիւրը սահմանադծին առանձին կողմերը գրաւելով: Խմբապետը կը բացատրէ խաղին օրէնքները եւ սուլիչը կը փչէ դրօշները կանգնեցնելու համար

Դրօշները պիտի հաստատուին կեդրոնէն Հարիւր քայլ հեռու ունէ դիրքի մը վրայ եւ կրնայ ընտրուիլ պետին յարմար դասած կէտը, ուր դժուար է թշնամի տեսնել եւ յարձակիլ: Առող պէտք է խրել դետնի մէջ, որ ծածնի դրօշը թէեւ կարելի է այնպէս մը յարձարցնել որ զիչ տեսնելի ըլլայ:

Դրօշը պաշտպանելու համար յիտուն քայլ հեռու պահակներ պիտի նշանակուին, որոնք չեն մօտենալու համար յըրօշակին մինչեւ որ թշնամի ունէ սկառուս յարձակում չգործէ:

Ունէ սկառուս որ թշնամի Հողի վրայ կը բռնուի, գերի պիտի աւարուի, պայմանաւ որ գերի բռնած միջոցին երեք անգամ զգրի, գերի, գերի, պտռայ: Եթէ նախ քան անոր պտռալը, օձիբը ձեռք տուող սկառուսը փախչի, ան ազատ է:

Երբ սկառուս մը գերի իյնայ, պահականոց պիտի առաջնորդուի եւ հսկողութեան ներքեւ պիտի պահուի: Պահականոցը ծառ մը կամ ժայռ մը կրնայ սեպուիլ, կեդրոնէն քսան ոտք հեռու: Գերի իյնողը ձեռքը կամ ոտքը պէտք է ծառին կամ ժայռին վրայ պահէ, եթէ ոչ չի կրնար ազատիլ:

Բանտարկուած սկառուս մը կրնայ իր ընկերներուն միջոցաւ ազատիլ, եթէ անոնցմէ մին յաջողի հակառակորդներու մէջէն ապահով անցնիլ եւ գալ զպչիլ իր ընկերոջ: Այդ պարագային՝ երկուքն ալ ազատ են անմիտանգ կ'արտօնուին իրենց բանակը վերադառնալու: Իսկ եթէ ազատարարը իր ջանքերուն միջոցին թշնամի սկառուներէն միոյն կողմանէ բռնուի, ան ալ իր կարգին գերի կ'իյնայ եւ պէտք է երթայ պահականոց:

Սկառուս մը միայն մէկ ընկեր կրնայ ազատիլ իւրաքանչիւր անգամուն: Եթէ կարելի ըլլայ դրօշակը փախցնել եւ սահմանագիծը անցնիլ, անիկա պէտք է աւարուի իրենց պատկանող դաւառը, իսկ եթէ առպատակողը սահմանագիծը Հասնիկէն ստաջ. բռնուի, դրօշը կրկին ետ պիտի արուի եւ Հաստատուի իր տեղը եւ խազը շարունակուի նոյն եղանակով:

Եթէ որոշեալ ժամանակամիջոցին մէջ ոչ մէկ բանակ կարողացաւ միւսին դրօշակը խել, խմբապետը սուլիչով պիտի դադրեցնէ խաղը եւ շահող պիտի յայտնուի այն բանակը որ ամենէն աւելի գերի. բռնած օւնի:

28.- Հ Ն Ի Ա Գ Ի Ր

Սկառուները սեղանի մը շուրջ կը բաշտուին: Խմբապետը անոնցմէ մէկուն ժօանալով, ցած ձայնով նախադասութիւն մը կ'ապաստանէ. այս վերջ

Ղենն, ալ պարտաւոր է նոյն նախադասութիւնը իր քովի ընկերոջ կրկնել եւ այդպէս յարողաբար: Իւրախանչիւր խմբակ զատ շքանակ մը կը կազմէ եւ ո՛ր խմբակը որ կարենայ ճշգուծեամբ նախադասութիւններու փոխանցումը կատարել, ա՛յն խմբակը կը շահի: Նախադասութիւնը պէտք է հետզհետէ կրկնել եւ կնճռուեալ:

29.- ԱՆՃԱՐԱԿ ՍԿԱՌԻՑ

Բոլոր սկառուաներուն աչքերը կը կապեն, իսկ խմբապետը անկիւն մը քաշուելով թեթեւօրէն կը սուլէ: Սկառուաները կը ջնան անոր հպիլ եւ ո՛վ որ կարենայ առաջին անգամ անոր դպչիլ, ան է շահողը: Սակայն խողը կը շարունակուի՝ մինչեւ որ ամէ՛քն ալ անոր դպչելով ազատին եւ մէջտեղը մնայ սկառուա մը, որ զանճարակ կը կոչուի եւ որ պարտի դըրաւ տալ:

30.- ՀՈՏԱՌՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ

Թղթէ փոքր պարկերու մէջ զանազան հոտաւէտ առարկաներ դնել եւ սկառուաներուն կարգաւ հոտոտել տալէ վերջ, այդ հոտերուն ցուցակը պահանջիլ: Աւուելագոյն հոտերու անունները յիշողը առաջնութիւն կը շահի:

31.- ԵՂՋԵՐՈՒԻ ՄՐՑՈՒՄ

Այս մրցումը կը կատարուի երկու կամ աւելի խմբակներու միջեւ: Իւրաքանչիւր խմբակ կը բաղկանայ ութը սկառուէ, որոնք իրարու հտեւ կանդնած մէկ գծի ուղղութեամբ մէկ ձեռքով պէտք է բռնեն առջեւ գտնուող սկառուտին դօտին: Նշան տրուելուն, խմբակները նոյն շարքով պիտի վայեն յիտուն թայլ հետեւ կէտ մը, եւ վերադառնան՝ առանց իրենց շղթայէն բաձնուելու: Այն խմբակը, որ միտրինակ վաղքով, մէկ կազմով եւ առանց անջատուելու մեկնումի կէտը կը վերադառնայ, առաջին կը համարուի:

32.- ՀԵՏՔԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

Սմբակի մը սկառուաներ գետին կը նստին եւ ոտքերին վեր կը բռնեն եւ ուրիշ խմբակի մը պատկանող սկառուաներ երեք վայրկեան ուսումնասիրելէ յետոյ իւրաքանչիւր սկառուի կօշիկին ձեւը, մեծութիւնը եւայլն, կը հետաշնան: Խմբակը յետոյ ոտքի կ'իջէ եւ յարմար գետին մը վրայ մէկ քանի ոտքի հետքեր կը թողու, որոնք միւս խմբակի պատկանող սղայոց կողմէ պիտի քննուին եւ յայտնուին թէ ո՞ր սկառուտին ոտքին նշաններն են:

33.- ՀՐԵՃՆԵՐՈՒ ՄՐՑՈՒՄ

Այս խողը ընտիր փորձ մըն է առաջին կարգի սկառուաները վարժ դարձնելու հրէջնեքու նման վիրաւոր մը կրելու:

Սրահ մը երկու մասի կը բաժնուի եւ իւրաքանչիւր հողմը կը յատկացուի ութը հողիէ բաղկացած մէյ մէկ խմբակի: Սրահին մէկ ծայրը իր կեդրոն օճենալով՝ խմբապետը իր դիրքը կը գրուէ, իսկ սրահին միւս ծայրը նախապէս երկու մասի բաժնուած ըլլալով, մէյ մէկ օգնական խմբապետներ կը կանգնին ու կը վարեն մրցումը ճշգրիտ եղանակով մը:

Իւրաքանչիւր խմբակ իրենց դիրքերը կը գրուեն օգնական խմբապետներու ձօտիկը, մէկ շարքի վրայ եւ կը ստանան՝ առաջնորդ թիւ 1, իսկ միւս սկառուաները թիւ 2, 3, 4, 5, 6, 7 եւ 8: Երբ խմբապետը մրցումը սկսելու նշանը կուտայ, թիւ 2 սկառուաը անմիջապէս գետին կը փոսուի եւ թիւ 1-ը

զայն կը վերցնէ իր ուսին վրայ հրէշնեբու մէթառով, ու կը տանի կեդրոն, ուր կը գտնուի խմբակներ: Անմիշտպէս որ հոն կը հասնի, թիւ 2-ը ստեղծ կը կանգնի եւ ետ կը վազէ իր խմբակին քով, ուր կը գտնէ թիւ 3-ը պատկանէ, ըստ առաջնոյն, հրէշի դրութեամբ կը վերցնէ զայն եւ կը փոխադրէ կեդրոն, ուրից այս անգամ թիւ 3-ը կը վերականգնանայ եւ կը վազէ թիւ 4-ին մօտ: Այսպէս խաղը կը շարունակուի՝ մինչև որ թիւ 4-ը՝ 5-ը փոխադրէ, թիւ 5-ը՝ 6-ը, թիւ 6-ը՝ 7-ը, եւ վերջապէս թիւ 7-ը՝ վերջին սկսուածը թիւ 8-ը:

Ո՛ր խմբակը որ ամենէն արագ կը լրացնէ փոխադրութիւնը, ան յաղթող կը յայտարարուի:

Այս մրցումը հետաքրքրական, ոգեւորիչ եւ միանգամայն օգտակար է, բայց փոխադրելու աճապարանքին մէջ, սկսուածները անզոյշ կը գտնուին յաճախ. չտեսարար անհրաժեշտ է որ օգնական խմբակները չխոյլատրեն ո՛րեւէ սկսուածի մեկնիլ, եթէ հրէշնեբու ձեռով «վերաւարուած» սկսուածը չվերցնեն իրենց ուսին վրայ:

34.— ՄՈՒԿ ՈՒ ԿԱՏՈՒ

Սկսուածները՝ կանգնած՝ իրարու ձեռք բռնելով շրջանակ մը կը կազմեն: Սկսուածներէն մէկը կ'ըլլայ մուկը, որ շրջանակի մէջ կը մնայ. իսկ ուրիշ մը կատու կ'ըլլայ եւ կը կենայ շրջանակէն դուրս: Երջանակը կը սկսի գտնալ եւ երբեմն երբեմն ձեռքերը վեր կը վերցնեն, որ ժամանակ կատուն, առիթ գտնելով, կը շանայ ներս սարդիլ եւ բռնէ մուկը մուկը մուկը նոյն պահուն դուրս կը փախչի: Երբ կատուն շրջանակին մէջ մտնելու յաջողի, սկսուածները իրենց ձեռքերը վար կը պահեն՝ թող չտալու համար անոր, որ շրջանակէն դուրս փախչի. քանզի սկսուածները մուկին համակիր են եւ զայն պաշտպանելու կողմնակից: Երջանակը իր բոլորածու շարժումը կը շարունակէ, իսկ կատուն «Միտ, միտ» կը մլաւէ խոնարհարար եւ յարմար առիթ մը գտնելու կը շանայ, որպէսզի ճեղքէ շղթան անոր ուեւ տկար մէկ կէտէն: Եթէ կատուն յաջողի այսպիսի խոյանքով մը ճեղքել շղթան եւ բռնել մուկը, այն ատեն մուկը պարտաւոր է դրաւ մը ներկայացնել, իսկ եթէ կատուն անկարող ըլլայ մուկը բռնելու, կատուն պիտի ներկայացնէ դրաւ մը: Խաղը այս ձեւով կը շարունակուի եւ ուրիշ սկսուածներ կը ստանաննն մուկ ու կատուի դերքերը:

35.— ՍԿԱՌԻՏԻ ՕՐԷՆՔԸ

Ատիկա ընտիր խաղ մըն է սկսուածները ընդունակ դարձնելու, որպէսզի օրէնքը քաջավարժ կերպով արտասանեն:

Երկու խմբակներ իրարու դէմ դիմաց կը կանգնին, իրենց պետ ունենալով խմբակին առաջնորդը: Ընդդիմադիր առաջնորդները իրաւունք պիտի ունենան հակառակորդ խմբակին ուեւ մէկ սկսուածին պահանջելու որ, անմիջապէս արտասանէ թիւ ... օրէնքը: Եթէ սկսուածը յաջողի պատասխանել լաւ, հակառակ պարագային՝ շարքէն դուրս կ'ելլէ եւ խաղին չի մասնակցիր այլևս: Յետոյ միւս առաջնորդը ուեւ օրէնք մը կը պահանջէ դիմացի խմբակէն, եւ նոյն գործողութիւնը կը շարունակուի՝ մինչև որ խմբակին սկսուածները նուազին եւ քաջահմուտ խմբակը առաջնութիւնը շահի:

36.— «ԳԱՆՁԸ ԳՏԻՐ»

Այս խաղը զօրաւոր հետախուզութեան եւ ուշադիր զննութեան պատուական առիթ կ'ընծայէ:



Գանձը պահուած է անձանօթ վայր մը եւ սկստւանքուն կը յայտնուի զանձին ինչ ըլլալ: Գանձին զտնուած վայրին առաջին հետքը ցոյց կը արուի, եւ սկստւանքուն այդ հետքին հետեւելով պէտք է առաջնորդուին զանձին թաքտաղը: Գիրքացնելու համար անձանօթ զանձին ճամբան, մասնաւոր տեղեր թելադարութիւններ նշշուած են: Սրբինակ (Ա) շտառաշարիբ դէպի արեւմուտք եւ քննէ առուակին հիւրիւր զանուտղ երբորդ զուրք: (Բ) Այդ դրան վրայ պիտի տեսուի նոր հրահանգ մը հետեւեալ իմաստով, «Ճեղքիցիբ ճամբադ հարաւ, հարաւ արեւելք եւ ցորենի արտին ժօաը զանուտղ մեծ կաղնի ծառէն հարիւր քալլ յառաջարիբ դէպի բլուրը, որ ձեր ձախ կողմը կ'իյնայ»: Այս եւ ասոր նման հրահանգներով սկստւանքուն պիտի յառաջանան մէկ կէտէ միւրը, մինչեւ որ զանձին պահուած տեղը զտնուի: Մէկ կէտէ միւրը առաջնորդող հեռաւորութիւնները պէտք է նոյն ըլլան եւ արուած հրահանգները պէտք է ըլլան յստակ, բայց ո՛չ այնքան ալ պարզ՝ այնպէս որ սկստուը աչքը զոց ինքզինք զանձին տեղը զտնէ: Սկստւանքուն պարտաւոր են կողմնացոյցի զանազան մասերը ճշգրտօրէն դիտնալ եւ լաւ հետախուզութեամբ եւ հետեւադութիւններ հանելով պէտք է ուղղուին դէպի բաղձացուած կայանը:

37.- ՀԱԻԿԻՐՆԵՐՈՎ ՎԱՁԳ

Սկստւանքուն մէկ կարգի վրայ շարուած, մէկ ձեռքով բռնած են վառելու համար բաւականաչափ փայտ եւ թուղթ միւս ձեռքով՝ աման մը, իսկ բերանին մէջ՝ դաւլ մը, որուն վրայ հակիթ մը դրուած է:

Տրուած աղբակչանին՝ սկստւանքուն շտապաւ պիտի յառաջանան վախտուն մեղք հեռաւորութեան մը վրայ նախապէս նշանակուած վայր մը, ուր կրակ վառելով իրենց ամանին մէջ հակիթը պիտի եփեն իբ ծայրագոյն առտիճանին ու անիջապէս վազելով ետ՝ դէպի մեկնումի կէտը, պիտի յանձնեն խմբապետին:

Այս խաղը կամ մրցումը զուարթ միջադէպերով լի՝ օգտակար փորձ մըն է, զոր կարելի է նոյնպէս կատարել հանդիսականներու առջեւ:

38.- ԳԵՐԻ ՍՎԱՌՈՒՏԸ

Նմարակի մը մէջէն կը զատուի սկստու մը, որուն ձեռքերը եւ սաքերը կապուած (քառակուսի հանդոցով) գերի բռնուած կը համարուի: Միւս խմբակը այս գերին պահպանելու համար հարիւր մեղք հեռաւորութեան մը վրայ շրջապատած է գինքը: Առաջին խմբակը իրենց ընկերնը ազատելու համար կը շննայ ճեղքել պաշարման դիժը, առանց թշնամիէն տեսնուելու ու քակելով գերի ընկերնը կապերը՝ շրջանակէն դուրս կը հանէ գինքը:

39.- ԳԻՐ - ԴԵՄԲ

Երկու խմբակներ դէմ դիմաց կանգնած մէկ ու կէս մեղք միջոցով, մէկ շարքի վրայ կը շարուին: Եարգերէն մէկը կը ստանայ զգիր՝ մակդերը, իսկ միւրը զգէճք:

Նմբապետը կը կանգնի երկու շարքերուն միջեւ ու օդը կը ննտէ պղինձեայ դրամ մը ու անոր ինկած ձեւին համեմատ կը պոռայ զգիր՝ քէ զգէճք մի՞ Ո՛ր շարքին անունը որ կանչուի, ան պարտաւոր է անիջապէս վազել դէպի տասը մեղք հեռու վայր մը՝ եթէ խաղը բացօթեայ տեղ մը կը խաղացուի, իւրաքանչիւր սկստու որ թշնամիին կողմէ կը բռնուի, որոշուած սահմանը հասնելէ առաջ, պարտաւոր է իբ շարքը փոխելու եւ անցնելու հակառակորդ կողմը:

Յարթական շարքը ան է՝ որ խաղին վերջաւորութեան ժամանակ ամենաշատ սկստուը կը հաշուէ իբ մէջ:

40.- ԱՌԻԻՄԻ ՈՐՍՈՐԻՈՒԹԻՒՆ

Այն աղան՝ որ առիւծի գերը պիտի ստանննէ՝ կանխաւ կ'առնէ իր հետ հունտեր եւլն. եւ ճթէնիստի վեց հար դնդակ: Եւ ճամբայ կ'ելլէ կոշիկին ներքեւ ունննալով հետք ձգող պայտեր, կէս ժամ առաջ վրնք հետապնդող խմբակէն, որուն իւրաքանչիւր սկստաբը դիմուած է մէյ մէկ ճթէնիստի գրննա դակով, առիւծը տեսնելուն պէս՝ անով կրթակիրու համար: Առիւծը սպաս է պահուածիլ, սողակիլ կամ վազիլ, ինչպէս որ կը փոփոջի, բայց երբ կարծր դնտի հանդիպի, պարտաւոր է հաւտեր թափել ամէն քայլափոխի, ցոյց տալու համար իր հետքը:

Երբ հալածող խմբակը առիւծին թաքստոցին մօտենայ, առիւծը պիտի սկսի իր ձեռքի ճթէնիստի գնդակներով հարուածել զանոնք, եւ գնդակները որու որ հանդիպի ան «մեռած» կը նկատուի եւ չի մասնակցի խաղին, իսկ եթէ առիւծը զարնուի որսորդներու գնդակէն, իւրաքանչիւր գնդակի հանդիպում մէկ վէրք կը համարուի, եւ երեք վէրքերէ յետոյ «մեռած» պէտք է համարել առիւծը:

Եթէ որսորդները չյաջողին առիւծին հետքը գտնել իւր մօտենալ անոր, ոչ ոք չաճած կը նկատուի:

Ձմեռը այս խաղը կրնայ խաղացուիլ առանց հետքի պայտերու, եւ ճթէնիստի գնդակներու փոխարէն, կարելի է ձիւնազնդակ գործածել:

41.- ԱՐԱԳ ԳԻՏԵՆԼՈՒ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Առէ՛ք 30 սանթիմէրը կողմ ունեցող երկու տախտակներ իւրաքանչիւրը բաժնուած 25 բաժանումներու: Առէ՛ք նոյնպէս 10 ընկող իւր 10 պղտիկ խիճեր: Տուէ՛ք իւրաքանչիւր խաղացողի տախտակ մը, 5 ընկող, եւ 5 խիճ Անոնցմէ մէկը ըստ կամ զանոնք շարելէ վերջ իր տախտակին վրայ, հինգ երկվայրեկան զայն ցոյց կուտայ իր հակառակորդին: Այս վերջինք պարտաւոր է իր կարգին՝ իր տախտակին վրայ շարել խիճերը եւ ընկերդները, այն կարգով ինչ կարգով որ ինք տեսած էր հակառակորդին տախտակին վրայ շարուած:

Իւրաքանչիւր սխալ շարուածք կորսնցնել կուտայ մէկ կէտ: Պաղը յետոյ կը շարունակուի փոխն ի փոխ:

42.- ԳԵՍՊԱՆՆԵՐ-

Պաղացողները երկու բանակի կը բաժնուին եւ կա՞մ զատ սփեռակներու մէջ կը խմբուին: Սկառտները կրնան բաժնուիլ իւրաքանչիւր բանակի մէջ վիճակով եւ կամ բանակի պետին ընտրութեամբ:

Իւրաքանչիւր բանակ իր մէջէն կ'ընտրէ դեսպան մը: Դեսպանները կը հեռանան իրենց խումբերէն եւ միանալով՝ զաղտնաբար կ'ընտրեն բառ մը, անձ մը, տարիկայ մը, պատմական դէպք մը եւլն, զոր միւս խաղացողները պարտին դուշակել:

Ա. բանակի դեսպանը կը մեկնի Բ. բանակը, որուն անդամները իրեն հարցում կ'ուղղեն: Այս հարցումներու ճայռ կամ ճաշք բառեր արտասանելով կրնայ պատասխանել դեսպանը: Բ. բանակի դեսպանն ալ փոխադարձաբար կ'այցելէ Ա. բանակը, եւ նոյն գործողութիւնը կը կատարէ: Սրիւս բանակներէն այն՝ որ ամենէն շատ կը գտնէ դուշակուելիք զաղտնիքը, իր դեսպանէն զատ կը պահէ նաեւ կորսնցնող կողմին դեսպանը:

Լաւ դասաւորուած հարցումներով եւ պատասխաններու ճշգրիտ նօթա-

գրու՞թե՞մք կարելի է դիւրութեամբ եւ արագ գուշակել անկարելի նկատուած բաները :

Հրահանդիչ եւ հետաքրքրական է այս խողը, եւ կը վարժեցնէ սկսուածները խորհելու, աւելորդ Հարցումներէ գզուշանալու եւ միեւնոյն ատեն ընդունակ կը դարձնէ հետեւութիւններ հանելու :

43.— ՃԱԳԱՐԸ (Հետաւէ՞ք դիտելու փարձ)

Ատէ՞ք երկու քառակուսի խաւաքարաներ 25 սանթիմէր մեծութեամբ եւ ուրուզծեցէ՛ք՝ երկուքին վրայ ալ՝ ճազարի պատկեր մը : Յետոյ, պատրաստեցէ՛ք սեւ թուղթէ քսան հաս կլոր շրջանակներ, որոնց ետեւը խէժ քրտուած ըլլայ՝ փակցնելու համար : Խաղացողներէն մէկը, ատոնցմէ 5-6 հաս կը փակցնէ ճազարի պատկերին մարմնոյն զանազան մասերուն վրայ եւ զայն կը ցուցադրէ խաղին մասնակցող ընկերոջ : Հակառակորդը, որ հարիւր մեղք հեռաւորութեան մը վրայ կը գտնուի, կը յառաջանայ՝ մինչև որ կարողանայ քառական որոշակի զանազանել շրջանակները եւ իր խաւաքարտին վրայ փակցնելու թղթէ կլորակ կտորները, իր տեսած գիրքերուն վրայ : Եթէ կարենայ զայս ընել 75 մեղք հեռաւորութենէ, ապացոյց է թէ շատ զօրաւոր աշէք ունի : Մինչև 70 մեղք (եթէ հինգ անգամ փորձէ, յետոյ երեք անգամ յաջողի) կը ստանայ շատ պատուաբեր նիշ մը : Իսկ 70-էն 80 մեղքի վրայ լաւ նիշ մը : Ատկէ աւելի մօտ հեռաւորութեանց համար նիշ չի գրուիր :

44.— ՓՈՔՐԻԿ ՃԱԿԱՍԱՄԱՐՏԸ


Խումբը կը բաժնուի երկու հասասար ուժերու, իրարմէ անուուզն չորս քիւմէր հեռու : Խումբերը իրարմէ զանազանելու համար, անոնցմէ մէկը դիւրարկին վրայ թաշկինակ մը կը փաթթէ : Իւրաքանչիւր բաժնի հետ կը գտնուի հակառակորդ կողմէն մէկը, իբր դատաւոր : Խմբապետը, որ վարիչը կը ներկայանայ, երկու խումբերուն ալ կուտայ հետեւեալ իմաստով պարզ հրահանգ մը.— «... Գիւղին մէջ թշնամի խումբ մը տեսնուած է. զայն հետախուզելու պատրաստուեցէ՛ք : Խմբապետը իր հրամանը ասիպէս մը պիտի հաղորդէ՝ որ երկու ուժերն ալ իրարու դէմ յառաջանան : Արդ ամէն խումբի պես իր պատրաստութիւնները կը տեսնէ կատարելու համար իր պատրաստութիւնները միաժամանակ կատարելու համար իր պաշտօնը, օգտագործելով գետնի յարմարութիւններ, հետազօտիչներ ուղարկելով դէպի առաջ եւ թշնամիին կողերուն կողմը : Հակառակորդ կողմէն, տեսնուած եւ դատաւորի կողմէ մատնանշուած սեւէ սկսուած, զինքը նշմարող կողմին շահեցնել կուտայ նիշ :

Որոշ ժամու մը կամ կանխաւ գիտցուած ազդանշանի մը վրայ շարունակ զանազակատան վրայ պարզուած դրօշ, եւլն.), խաղը վերջ կը գտնէ :

Յաղթանակ կը պատկանի այն խումբին, որ յաջողած է հակառակորդին կեդրոնին մօտեցնել աւելի թիւով սկսուածներ : Թշնամիին կեդրոնին շուրջ համախորհուած իւրաքանչիւր սկսուած կը հաշուուի երկու նիշ, իսկ նկատուութեան չեն առուիր նախապէս տեսնուած սկսուածները :

Նիւ Եարֆ

ՄԿՐՏԻՉ ԵԱՆՉԳԵԱՆ



549-59



ՄԱՐԹԻՆ ԳԱՐԱՏԱՂԵԱՆ

Մեր նշանաւոր արտիստը հայրենակիցը, որ իր առաջին ժապաւեճի պատրաստութեանէն յետոյ *“Reencuentro con la gloria”*, մտադիր է ծապաւեճի քաշել նաեւ *“Մուսա Տաղի 40 օրերը”*: Յաջողութիւն կը մաղթենք:

#### ՏԱՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՈՒՆԵՍՏԻ ԾԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԱՅՍ ՏԱՐՈՒԱՆ ընթացքին Մոսկուայի մէջ տեղի ունեցաւ Հայկական արուեստի եւ գրականութեան տասնօրեակը: Այս տասնօրեակի ընթացքին Մոսկուայի Հասարակութիւն ծանօթացաւ Հայաստանի արուեստագէտներու նոր ստեղծագործութիւններուն:

Տօնակատարութիւններուն մասնակցեցան Երևանի օփերան եւ պարի խումբերը, Սունդուկեան եւ Ստանիսլաւսկի Քատրոնի խումբերը, Լենինականի Մուսեանի անուան Քատրոնը, պետական Համանուագային եւ Բողոզըդական խումբերը, Հանրապետութեան գրողները, երաժշտագէտները, նկարիչները, սինեմայի արուեստագէտներ:

Այս առթիւ Հայաստանի արուեստի եւ գրականութեան բոլոր աշխատողները մեծ պատրաստութիւններ տեսած էին:



Մեր հայրենակից Մարթին Գարատազեան, որ համաշխարհային արուեստավարժ ախոյեան մըն է ազատ ըմբշամարտի եւ քաջամարտի է հանրապետութեան մէջ իր պարբերական մրցումներով, վերջերս պայմանաւորաւած է Արժանաբիւնեան ժապաւէնի "առաջին" սինէի ընկերութեան հետ, ժապաւէնի մը մէջ իրբեւ առաջին դերակատարը:

Ժապաւէնին անունն է՝ "Reencuentro con la gloria", որ ձօներս պիտի ներկայացուի Մար Տէլ Փլաթայի մէջ:

Վերի պատկերը կը ներկայացնէ ժապաւէնի գործողութիւն մը, Գարատազեանի մասնակցութեամբ:

#### «ԿՈՎԿԱՍՏԱՆ ԵՐԿՆՔԻ ՏԱԿ»

Փրակայի մէջ լոյս տեսած են հայ գրողներու գործերը, չէի լեզուով:

«Կովկասեան երկնքի տակ» վերնադիրը կրող զերբը, որուն յառաջաբանը գրած է չէի յայտնի գրադէտ Ձ. Նովակ, կը պարունակէ Ա. Իսահակեանի «Ձիւլի Սուլթանի երգը», «Կապիտան Ղազարը», Նար-Դոսի «Ես եւ Նան», Յովհաննէս Թումանեանի «Եղջերուն», Եր. Օտեանի «Բարի Դահլճը», Հր. Քոչարի «Գեներալի Քոյրը»: Վիպակներ են ասոնք, զորս Թարգմանած է Թուրոյժ Նեզուալ, պատկերազարդած է՝ Բլաժէկ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ նրբակազմ ոչխարներու գլխաբանակը 180-000 էր 1949-ին: Ներկայիս այդ թիւը բարձրացած է 700-000-ի: Ոչխարներու ցեղային բարելաւման շնորհիւ այսօր բրզեղէնի գործարանները ստան անգամ աւելի նորբ բուրդ կը ստանան: Մեծ չափերով կը կատարուի այժմ ոչխարներու արուեստական բեղմնաւորումը:

### ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

ԳԷՅՄՊՐԻՃ, ՄԻԽ — Համազգային Հայագիտական Միութեան երկրորդ տարեկան Համաժողովը, իր առած կարգ մը որոշումներով, նոր գործունէութեան մը պիտի սկսի յառաջիկային, հաստատելու համար Հայկարանական ամպիտն եւ Հայագիտութեան կեդրոն մը, Հարվըրտ Համալսարանին մէջ:

Այս տարուան Համաժողովը, որ տեղի ունեցաւ Յունիս 8-10, 1956, Հարվըրտի մէջ, գրազեցաւ սահմանադրութեամբ: Վերջնորոշեց Հինգ անդամներ եւ ընտրեց երեք նոր անդամներ Ղեկավարներու Յանձնարումքին մէջ: Ան ծրագրեց կեդրոնացած գործունէութեանց շարք մը, աշնան սկսելու համար:

Համաժողովին ներկայ էին անդամներ եւ բարեկամներ, որոնք եկած էին հետաւոր Անգլիայէն, Գալիֆորնիայէն, Ինչպէս նաեւ Միլուոքիէն, Նիակարա Պոլզէն, Թրոյէն, Նիւ Եորքէն, Նիւ Ճըրզի Կոնանգէն, Ֆիլադելֆիայէն, Ուաշինկթընէն եւ Նիւ Ինկլէնսի նահանգներէն:

### ՀԱՄԱԺՈՂՈՎ ՀԱՅԱԿԱՆ ՌԻՍՄԱՆՑ ՄԱՍԻՆ

Այս Համաժողովին ամենաշխատաւոր մասն էր Յունիս Ծ-ի Հաւաքոյթը, Հարվըրտ Համալսարանի մէջ, ուր քննութեան առնուեցան կարգ մը հարցեր Հայկական ուսմանց վերաբերող հետազոտութեանց մարզին մէջ: Այս նիւթի մասին իրենց կարծիքները յայտնեցին աչքառու դիտականներէն սիրոֆ. Սիբորֆի Տէր Ներսէսեան, Տըմպարթըն Օքս Հետազոտութեան Կեդրոնէն, Արթըր Ճէֆրի, Գոլումպիա Համալսարանէն, Գալթըն Գուն, Փենսիլվանիոյ Համալսարանէն, եւ Ճաշուա Ուաթմօ, Հարվըրտէն:

Բոլոր խօսողներն ալ շեշտեցին կարիքը Հայկական ուսմանց կեդրոնի մը, Հարվըրտ Համալսարանին մէջ, ինչպէս որ ծրագրուած է, եւ ապահովցուցին ներկաները, թէ ընդարձակ նոր հորիզոններ պիտի բացուին՝ անգամ մը որ Հայկարանական ուսմանց ծրագրերը դրուի մնայուն հիման մը վրայ եւ անոր գործադրութիւնը դառնայ տեսական:

### ԳԻՏԱԿԱՆՆԵՐ ԿԸ ԵՆԵՏՏԵՆ ԲԱԶՄԱԹԻԻ ԿԱՐԻՔՆԵՐ

Ուրաթ եւ Եարաթ տեղի ունեցած նիստերուն հրաւիրեալ բոլոր խօսողները արտայայտուեցան Հայկարանական ուսմանց բազմաթիւ կարիքներու մասին, Հիմնուած իրենց մասնագիտութեանց եւ աշխատեցին վրայ: Իւրաքանչիւրը շեշտեց գիտական յարաբերութիւնները եւ անոնցմէ եկած բարիքները, եթէ անոնք ըլլան կազմակերպուած, մնայուն, եւ բարձր ակադեմական՝ Հայկարանական ուսմանց առնչութեամբ:

Փրոֆ. Տէր Ներսէսեան կոչ ուղղեց որ վերագործնու մը ըլլայ Հայկական դեղորուեստի եւ մշակոյթի մարզին մէջ, ի լոյս բերելու Հայոց դեղեցիկ աւանդութիւններն ու նպաստները աշխարհի արուեստին: Փրոֆ. Ճէֆրի, դատապարտեց պակասը բազմաթիւ արժէքաւոր Հայ կրօնական գործերու հրատարակութեանց եւ թարգմանութեանց, աւելացնելով, որ «Բրիտանական մասժողութեան եւ գործունէութեան պատմութեան համար տակաւին մեծ նպաստներ կան, որ կրնան ի յայտ գալ լաւ կազմակերպուած Հայկարանական ուսմանց ծրագրով մը»: Փրոֆ. Ուաթմօ, որպէս հմուտ լեզուագէտ մը, անգամ մը եւս շեշտեց կարիքը շարունակելու Հայ լեզուի ուսումնասիրութիւնը, ինչպէս եւ պատրաստութիւնը արդիական մեթոտներով կազմուած

գերականութեանց եւ այլ գրքերու, ուսուցանելու համար Հայերէնը մանուկներուն, ինչպէս նաեւ շափուհաններուն:

Միւս խօսողները, որոնք շնչուցին կարիքն ու կարեւորութիւնը հայկառանական ուսմանց, իրենց յատուկ մարզերուն մէջ, եղան փրոֆ. Գուն, հնարանութեան մէջ, Տոքթ. Ռայպրթ Մինչուլ, Գրաուն Համալսարանէն, շեզուարանութեան մէջ, Տոքթ. Փոլ Գաուքեան, Նիւ Եորքէն, դրամապիտութեան մէջ, եւ Տոքթ. Արչակ Օ. Սարգիսեան, Գանդրէսի Մասնաւորանէն, պատմութեան եւ մասնաւորաբար Հայկական Դատի հարցերուն մէջ: Փրոֆ. Ռիչըրտ Ն. Ֆրայ, օժանդակ դէկանսարը Հարվըրտի Միջին Արեւելեան Աւսմանց Կեդրոնին, որ վարեց այս հաւաքոյթիներուն աստեղագետութիւնը:

ՀԱՐՎԸՐՏԻ ՀԻՄՆԱԳՐԱՄԻՆ ՅԱՒԵԼՈՒՄԸ

Ետքից երկոյ, Գոսթոնի Հարվըրտ Գլուպի մէջ տեղի ունեցած ճաշկերոյթի ընթացքին, Ղեկավարներու Յանձնարումքի աստեղագետ Մանուկ Ս. Երնկ յայտարարեց թէ Հարվըրտի Հայկառանական Ամպիոնի Հիմնադրամին գումարը հասած է 42.000 տոլարի: Անան ճաշկերոյթներ պիտի սարքուին այլ հասարակական համայնքներուն մէջ, այս գումարը բարձրացնելու համար 100.000 տոլարի: Յայտնեց նաեւ, որ Հայագիտական Միութեան համազգային անդամութիւնը իր մէջ կը պրոնաակէ շուրջ 900 անդամներ, 23 նահանգներէ:

Գր. Երնկ կողմ ուղղեց ներկաներուն, նպատակելու որ այս նպատակը շուտով դառնայ իրականութիւն: Մասնաւորաբար յիշուեցաւ այն նիւթական նպատակը, որ եղած էր գրասենեակի կամուտը աշխատողներուն կողմէ: Միութիւնը հրապարակային շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք նաստած էին գրամահաւաքման:

Մասնաւոր գնահատութեան արժանացան այն տասներկու նուիրատուները, որոնք տուած կամ խոստացած էին հազար տոլար եւ աւելի տար Հարվըրտ Համալսարանի Հայկառանական Ուսմանց Հիմնադրամին: Անոնք են Ֆրէտ Աւազեան, Փրաւիտէնէն, - Ռ. Ա., - Դատաւոր Նազարէթ Գարուսեան, Երեւանի շրջանէն, Օր. Անիւ Պէշկէթեարեան, Գէմպրիճէն, - Մէնու Տոքթ. Միւրաթ Զահեան, Փրաւիտէնէն, - Ռ. Ա., - Ճորճ Եկուեան, Փրաւիտէնէն, - Ռ. Ա., - Զարլը Ղազարոսեան, Փուլթաքէթէն, - Ռ. Ա., - Ճ. Մարք Յօլլիկեան, Մէտֆըրտէն, - Մէնու, - Դանիէլ Գոնսալեան, Նուարքէն, - Ն. Ճ., - Եղուարդ Մարտիկեան, Տիթթոյթէն, - Միւր, - Տիգրան Մարտիկեան, Լոնկ Ալլէնտէն, - Ն. Ե., - Մ. Ճ. Նահաբեան, Փուլթաքէթէն, - Ռ. Ա., - եւ Զորավար Սարգիս Մ. Զարդարեան, Արլինկթընէն, - Մէնու:

Յայտնի եղաւ որ այս աստատման նուիրատուներէն Եղուարդ Մարտիկեան եւ Ճ. Մարք Յօլլիկեան, բարձրացուցած էին իրենց նուէրը երկու հազար տոլարի, երկրորդ Տարեկան Համաժողովի առթիւ:

Այստեղ պէտք է յտակօրէն շնորհել, թէ Հիմնուելիք այս Ամպիոնը տարբեր պիտի ըլլայ ներկայիս կարգ մը համալսարաններու մէջ տրուած հայկական դասընթացքներէն, որոնք իրենց ծաւալով սահմանափակ են եւ տեսողութեամբ ժամանակաւոր:

Հարվըրտի մէջ Հիմնուելիք Ամպիոնը պիտի շարունակէ իր գոյութիւնը այնքան ատեն որ նոյն ինքն համալսարանը պիտի տեսէ, եւ պիտի հասցնէ ուսուցիչներ, պատմադէպներ, բանասէրներ, թարգմանիչներ եւ գրողներ, հայկառանական եւ յարակից ուսմանց մէջ:

Արտասահմանի մէջ միակը ըլլալու սահմանուած է հայագիտութեան այս համաշխարհային կեդրոնը, իր մէջ ունենալիք համառատաւոր արեւելագետներով Հարվըրտ Համալսարանին հետ շարունակելիք իր երկար կեանքով, ընդար-

ձակուելիք հսկայ հայկական մատենարանով, և հրատարակելիք բազմաթիւ մեծ ու փոքր հատորներով, հայագիտութեան նուիրուած Էնտազոտութեան և գաւառաբարակութեան այս Ամպիոնը պիտի գերազանցէ ուրիշ ոեւէ համալը-տարանի ունեցած հայկական գասընթացքներու կամ հայկաբանական ուսմանց ծրագիրը:

Շեշտուեցաւ նոյնպէս, որ Հարվըրտ Համալսարանը պիտի բերէ իր գրա-կան մասնակցութիւնը՝ այս ծրագիրը իրականացնելու համար: Իր մասնակ-ցութիւնը պիտի ըլլայ ոչ միայն բարոյական, այլ և նիւթական, և պիտի ըլլայ մօտաւորապէս այնքան, որքան Հ. Հ. Միութիւնը ծրագրած է գոյա-ցընել հիմնադրամը:

**ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ**

Ճաշկերոյթին զլիաւոր խօսողն եղաւ Տոքթ. Տէր Ներսէսեան, որ աւելի ընդարձակեց նախորդ երեկոյ Հայ արուեստի մասին տուած իր բացատրու-թիւնները: Ան ըսաւ որ առաւել ծանօթութիւններ Հայ Արուեստի և ընդհան-րապէս մշակութային արժէքներու մասին, մեծապէս պիտի ծառային մըլ-տանյնաւորելու հայկական արժէքաւոր ժառանգութիւնները ներկայ սերուն-դին մէջ:

Հարվըրտ Համալսարանի ներկայացնողն էր Ռէյլիմ Պէնտիք-Ամիթ, նա-խագահ Նաթան Մ. Բիւդիի օգնականը: Անիկա բերաւ բարեմաղթութիւնները համալսարանին և անոր նախագահին, և անգամ մը ևս շեշտեց Հարվըրտի գործակցութեան մասին, և նշեց համալսարանին փափաքը, մնայուն ուսումնա-ծրագրի մը հաստատուիլը այնտեղ, առաջնորդութեամբը աշխարհածանօթ գիտնականի մը, որ զլիաւորէ Հայկաբանական Ուսմանց Ամպիոնը:

Ռեբիշ խօսողներ եղան Վեր-Ա. Ա. Պետիկեան, փրոֆ. Ն. Ճոյայ և Ռի-չըրտ էլթըն, Միլուօքիէն, Ռիւսը, Սեզանապետութիւնը վարեց Տոքթ. Արա Աւագեան, որ նաև ամփոփ կերպով ներկայացուց ներկայ կացութիւնը և ակնկալութիւնները Հ. Հ. Մ. Ի և Հարվըրտի Ամպիոնի նիւթական ծրագրին:

**ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ**

Ղեկավարներու Յանձնախումբի համաժողովին ըրած տեղեկատուութեան մէջ յայտնուեցաւ որ Միութեան ֆանքերով Հարվըրտ Համալսարանի մատե-նարանին հայկական հաւաքածոյին վրայ աւելցած են 1500—է աւելի հատոր-ներ: Այս գիրքեր եկած են հետեւեալ ազգայիններու հաւաքածոնքէն—Տոքթ. Յովհաննէս Մովիկեան, Տիրատուր Ա. Տիբիճեան, Ա. Նազար, Գար-րիէլ Մ. Փափազեան, ու Տէր և Տիկ. Խաչիկ Գալէնտէրեան:

